# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 նոյեմբերի 2022 թվականի N 1677 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 1570-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը, 3-րդ մասը և 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող ոչ պարենային արտադրանքների և օրենսդրական չափագիտական վերահսկողության ոլորտի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 8-ի N 1263-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1570-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի «Ոլորտային ռիսկի հաշվարկման աղյուսակը» շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

| Հ/Հ | Ոլորտի անվանումը | Հավանական վնասի ազդեցության մակարդակը (միավոր) | | | ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները (միավոր) | | | Ոլորտային ռիսկը (միավոր) (8=2+3+4+5+6+7) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | թեթև | լուրջ | ծանր | ոչ խիստ և սահմա-նափակ | նվազ խիստ | խիստ և մեծա-քանակ | |
| | | 1-37 | 38-45 | 46-50 | 1-24 | 25-36 | 37-40 | |
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | Խաղալիքներ | | | 50 | | | 40 | 90 |
| 2. | Արտադրական կանեփ | | | 50 | | | 39 | 89 |
| 3. | Ավտոգազալցակայանների շահագործման տեխնիկական անվտանգության կանոններ | | | 48 | | | 40 | 88 |
| 4. | Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք | | | 48 | | | 39 | 87 |
| 5. | Չափումների միասնականություն | | | 48 | | | 38 | 86 |
| 6. | Օծանելիք և կոսմետիկ արտադրանք | | | 48 | | | 37 | 85 |
| 7. | Ցածրավոլտ սարքավորում | | | 47 | | | 37 | 84 |
| 8. | Ծխախոտային արտադրատեսակներ, դրանց պատկանելիքներ, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ և ծխախոտային արտադրատեսակների նմանակներ | | | 46 | | | 37 | 83 |
| 9. | Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն | | | 46 | | 36 | | 82 |
| 10. | Կենցաղային և սանիտարա-հիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանք | | | 46 | | 35 | | 81 |
| 11. | Քիմիական արտադրանք | | | 46 | | 34 | | 80 |
| 12. | Ցեմենտներ | | | 46 | | 33 | | 79 |
| 13. | Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք | | 44 | | | 34 | | 78 |
| 14. | Ավտոմոբիլային և ավիացիոն բենզին, դիզելային և նավերի համար նախատեսված վառելիք, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիք և մազութ | | 44 | | | 33 | | 77 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15. | Որպես վառելիք օգտագործելու համար նախատեսված հեղուկացված ածխաջրածնային գազ | | 43 | | | 33 | | 76 |
| 16. | Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոց | | 43 | | | 32 | | 75 |
| 17. | Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշում և հարգադրոշում | | 43 | | | 31 | | 74 |
| 18. | Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք | | 43 | | | 30 | | 73 |
| 19. | Հանքային պարարտանյութեր | | 43 | | | 29 | | 72 |
| 20. | Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառման սահմանափակում | | 43 | | | 28 | | 71 |
| 21. | Գազանման վառելիքով աշխատող սարքավորում | | 43 | | | 27 | | 70 |
| 22. | Թեթև արդյունաբերության արտադրանք | | 45 | | 24 | | | 69 |
| 23. | Քսանյութեր, յուղեր և հատուկ հեղուկներ | 37 | | | | 31 | | 68 |
| 24. | Սինթետիկ հումքով լաքեր և ներկեր | 37 | | | | 30 | | 67 |
| 25. | Փաթեթվածքի անվտանգություն | | 38 | | | 28 | | 66 |
| 26. | Տրանսպորտային փոխադրման և (կամ) օգտագործման համար նախապատրաստված բնական այրվող գազ | | 40 | | | 25 | | 65 |
| 27. | Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորում | | 39 | | | 25 | | 64 |
| 28. | Էներգախնայող սարքերի էներգաարդյունավետություն | | 39 | | 24 | | | 63 |
| 29. | 1000 Վ-ից բարձր լարման փոխարկման էլեկտրական ապարատ | 37 | | | | 25 | | 62 |
| 30. | Շինարարական ապակիներ | 37 | | | 24 | | | 61 |
| 31. | Կահույքագործական արտադրանք | 36 | | | 24 | | | 60 |
| 32. | Փոխադրման և (կամ) օգտագործման համար պատրաստված նավթ | 36 | | | 23 | | | 59 |

» .

2) հավելվածի 10-րդ կետում «Տնտեսավարող սուբյեկտի գործունեության վերլուծություն» աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

| Հ/Հ | Ռիսկ առաջացնող գործոնները | Ցածր | Միջին | Բարձր |
|---|---|---|---|---|
| 1. | Գործունեության իրականացման վայրերի թիվը | 1 վայր – 3 միավոր | 2 կամ 3 վայր – 4 միավոր | 3 վայրից ավելի – 6 միավոր |
| 2. | Արտադրանքի պահպանման և տեղափոխման պայմաններով պայմանավորված ռիսկ | ոչ էական – 1 միավոր | էական – 3 միավոր | խիստ – 5 միավոր |
| 3. | Բողոքների քանակը վերջին մեկ տարում | 0 բողոք – 0 միավոր | մինչև 3 բողոք – 3 միավոր | 3 և ավելի բողոք – 7 միավոր |
| 4. | Խախտումների վերացմանն ուղղված գործողությունները | խախտում չունի – 0 միավոր | Խախտումը վերացրել է – 3 միավոր | խախտումը չի վերացրել – 7 միավոր |
| 5. | Անվտանգության և որակի համակարգ* | ունի ISO համակարգ – 1 միավոր | ունի որակի հսկման համակարգ – 3 միավոր | ենթարկվել է փորձաքննությունների – 5 միավոր |
| 6. | Տարիքային կազմ | 14-ից 65 տարեկան – 3 միավոր | 7-ից 14 տարեկան – 4 միավոր | մինչև 7 տարեկան կամ 65 տարեկանից բարձր – 5 միավոր |
| 7. | Արտադրող երկիր | ԱՄՆ, Կանադա, Շվեյցարիա, Իսլանդիա, Միացյալ Թագավորություն, Նորվեգիա, Ավստրալիա, Ճապոնիա, Նոր Զելանդիա, ԵՄ անդամ պետություններ, Հարավային Կորեա – 1 միավոր | ԵԱՏՄ անդամ պետություններ – 3 միավոր | այլ պետություններ 5 միավոր |

*Միայն արտադրանքի արտադրության փուլերում ներդրված համակարգերի համար։».

3) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին կետով՝

«10.1. Տեսչական մարմնի կողմից մեկ տարվա ընթացքում նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկից ավելի ստուգում իրականացնելու դեպքում տնտեսավարող սուբյեկտների ռիսկի գնահատման համար հիմք է ընդունվում այդ տարվա ընթացքում հաշվարկված առավելագույն ընդհանուր ռիսկը։».

4) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 13.1-ին կետով՝

«13.1. Ռիսկի գնահատման արդյունքում հավասար միավորներ ստացած տնտեսավարող սուբյեկտները չեն կարող ընդգրկվել ռիսկայնության տարբեր խմբերում: Տվյալ դեպքում հավասար միավորներ ունեցող բոլոր տնտեսավարողներն ընգրկվում են նվազ ռիսկայնության խմբում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.11.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ